ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ շահագրգիռ նախարարությունների առաջարկությունների ու դիտողությունների մասին

NN	Առաջարկություն և դիտողություն	Նշումներ
	1. ՀՀ արդարադատության նախարարություն	
1	<Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով հաստատված հավելվածի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին բաժնի 1-ին կետում <Հայաստանի Հանրապետության <Կրթության մասին>> բառերն անհրաժեշտ է փոխարինել <Կրթության մասին> Հայաստանի Հանրապետության> բառերով՝ նկատի ունենալով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահաջները: Նույն կետում նախատեսված իրավական ակտերի անվանումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահաջներին: Նույն դիտողությունը վերաբերվում է նաև նախագծի 9-րդ կետին:	*Ընդունված է:*
2	Նախագծի տողատակերում հղում է կատարվում այն աղբյուրներին, որոնցից օգտվելով սահմանվել են նախագծի ծրագրային դրույթները, որոնք ըստ էության հանդիսանում են ծանոթագրություններ: Այդ առումով հայտնում ենք, որ նախագծի տողատակերում նշված տեքստն անհրաժեշտ է շարադրել առանձին կետերի տեսքով՝ հաշվի առնելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված պահանջները:	*Ընդունված է:*
3	Նախագծի 71-րդ և 73-րդ կետերն անհրաժեշտ է համարակալել՝ համապատասխանեցնելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:	*Ընդունված է:*
4	Նախագծի 100-րդ կետի 2-րդ ենթակետում հստակեցման անհրաժեշտություն ունի <բովանդակային վարչություններ> արտահայտությունը:	*Ընդունված է:*
5	Նախագծի 101-րդ կետի 4-րդ ենթակետում նշված (PIRLS) հապավումն անհրաժեշտ է սահմանել նախագծի հապավումների ցանկ բաժնում:	*Ընդունված է:*
	2. ՀՀ քաղաքաշինության նախարարություն	
1	Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի նախագծի «Կրթության համակարգի առկա վիճակը և հիմնախնդիրները» բաժնում ներառել տեղեկատվություն հետևյալ բովանդակությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում գործող ավելի քան 1440 հանրակրթական դպրոցների զգալի մասը կառուցվել են մինչև 1970-ական թթ. և չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին, չունեն բնականոն ուսումնակենցաղային պայմաններ: Հանրակրթական դպրոցների ընդհանուր թվից 956-ը (66.4 %) ենթակա են հիմնանորոգման, այդ թվում 234-ը	*Ընդունված է:*

	վերականգնման-ուժեղացման աշխատանքների կարիք ունեն, 167 (11,6 %) դպրոցներ գտնվում են վթարային վիճակում, իսկ 67 (4,6 %) դպրոցներ անավարտ կամ նոր մասնաշենքերի կառուցման կարիք ունեն: Բացակայում են 209 դպրոցներում սպորտային և 254 դպրոցների հանդիսությունների դահլիճները: Որոշ դպրոցներում բացակայում են կամ չեն գործում ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգերը»:	
	3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	
1	Նախագծի 70-րդ կետում, որպես կրթության ոլորտի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներ, ավելացնել հետևյալ ենթակետերը՝ • հիմնական հանրակրթության բարձր դասարաններում (8-րդ և 9-րդ) և ավագ դպրոցում անբավարար է աշակերտների հետ տարվող մասնագիտական կողմնորոշման և սոցիալ-հոգեբանական աշխատանքները, • դպրոցում օգտագործվող դասագրքերի մշակման և մշակված դասագրքերի հետագա բարելավման աշխատանքներին դասավանդող, զգալի մանկավարժական փորձ ունեցող ուսուցիչների մասնակցությունն ապահովող գործուն և արդյունավետ մեխանիզմների բացակայություն, • չնայած ավագ դպրոցներում առկա հոսքային ուսուցման առկայությանը՝ սովորողների ԲՈՒՀ ընդունվելն առանց կրկնուսուցման գործնականում դարձել է անհնար (կրկնուսուցման տարեցտարի աճող տեսակարար կշիռ):	*Ընդունված չէ,* քանի որ նշվածները խնդիրներ են, այլ ոչ թե հիմնախնդիրներ: Միաժամանակ, հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները կետը վերախմբագրվել է:
2	Նախագծի 3-րդ բաժնի 71-րդ կետում 2-րդ նախադասությունը «Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է՝ արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով:« շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է՝ կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով»:	*Ընդունված է:*
3	Նախագծի 5-րդ բաժնի 89-րդ կետը լրացնել նոր ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «5)ներդնել ուսումնական հաստատությունների ֆինանսավորման մեխանիզմներ՝ պայմանավորված դրանց օբյեկտիվ և մասնակցային գնահատման արդյունքով»:	*Ընդունված է,* որոշ խմբագրմամբ:
4	Նախագծի 5-րդ բաժնի 90-րդ և 91-րդ կետերում խոսվում է գերազանցության կենտրոնների մասին: Այս գաղափարը և ձևակերպումները առկա են եղել նաև նախորդ 2005-2010թթ. կրթության զարգացման ծրագրում, սակայն ո՛չ վերլուծական մասում, ո՛չ էլ հանրային քննարկումներում ԿԳՆ-ի կողմից չի ներկայացվել՝ արդյո՞ք անցած տարիներին հաջողվել է ունենալ գերազանցության կենտրոններ, թե՞ ոչ, ի՞նչ սկզբունքներով, չափորոշիչներով է սահմանվում գերազանցության կենտրոնը, ինչպիսի՞ն է նրանց կարգավիճակը մյուս կրթական հաստատությունների հետ համեմատած, ի՞նչ իրավական ակտերի հաշվին պետք է այդ կենտրոնները իրականացնեն 91-րդ կետի 4-րդ ենթակետի գործունեությունը: Հետևապես նշված կետերը պետք է արմատապես վերանայվեն:	*Ընդունված չէ:* <<Գերազանցության կենտրոն>> հասկացությունը ուսումնական հաստատության նոր իրավական կարգավիճակ չի ենթադրում, այն որակական բնութագիր է, որը մատնանշում է հաստատության գործունեության արդյունավետությունը և զարգացման ներուժը:

5	Նախագծի 6-րդ բաժնի «6.1. Բացառիկ նվաճումներին ուղղված ծրագրերը խրախուսող ներդրումային քաղաքականություն» կետը ներառված է եղել նաև նախորդ 2005-2010թթ. կրթության զարգացման ծրագրում, սակայն վերլուծական մասում որևէ խոսք չկա այս ծրագրի հաջողությունների մասին: Միաժամանակ բացակայում են այս քաղաքականության շրջանակում իրականացված ծրագրերի արդյունավետության գնահատման չափորոշիչները, ծրագրի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ընթացակարգը: Որոշակի խնդիրներ կան նաև անկախ փորձագիտական հանձնաժողովների կողմից ծրագրերի երաշխավորման հարցերում, ինչը բերում է միևնույն կազմակերպությունների և մասնագետների կողմից տարբեր տարիներին տարբեր ծրագրեր կատարելու հնարավորության ձեռք բերմանը: Այս ենթակետում բերված պարզաբանումները կարիք ունեն առավել մանրամասն վերլուծության և հստակ նկարագրումների, որոնք պետք է միտված լինեն ապահովելու նախատեսվող միջոցների առավել նպատակային և արդյունավետ ծախսումը:	*Ընդունված չէ:* Կրթության զարգացման պետական նախորդ ծրագիրը գործել է 2001-2005 թթ., որում նման քաղաքականություն նախատեսված չի եղել:
6	Նախագծի 7-րդ բաժնի 109-րդ կետի 3-րդ ենթակետի «ա. ապահովել հոսքային ուսուցման կազմակերպումը՝ սովորողների հակումներին ու նախասիրություններին համապատասխան և նախապատրաստել մասնագիտական կրթություն ստանալուն» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ա. ապահովել ավագ դպրոցում հոսքային ուսուցման հենքի վրա սովորողների նախնական մասնագիտական որակավորում ստանալու հնարավորությունը՝ ըստ նախասիրությունների»:	*Ընդունված չէ:* ՀՀ օրենսդրությամբ նախնական մասնագիտական որակավորումներ սահմանված են միայն արհեստագործական մասնագիտությունների համար:
7	Նախագծի 7-րդ բաժնի 110-րդ կետի 1-ին ենթակետի «բ. ՄԿՈՒ որակավորումների համակարգը համապատասխանեցնել որակավորումների եվրոպական շրջանակին» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «բ.մշակել և ներդնել ՄԿՈՒ որակավորումների ազգային շրջանակը՝ այն համապատասխանեցնելով որակավորումների եվրոպական շրջանակին»:	*Ընդունված չէ:* Որակավորումների ազգային շրջանակի մշակումը և ներդրումը նախատեսված է 7.2.2 բաժնի 1)-ին ենթակետով:
8	Նախագծի «7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ» (համարակալումը սխալ է) բաժնում խոսվում է մոնիթորինգային ցուցանիշների մասին, սակայն որևէ խոսք չկա գնահատման համակարգի վերաբերյալ: Անհրաժեշտ է ներկայացնել ծրագրի և դրա առանձին բաղադրիչների գնահատման համակարգը:	*Ընդունված է մասամբ:* Ծրագրի գնահատումն իրականցվելու է ըստ ծրագրի միջանկյալ և վերջնական նպատակադրումների իրականացման աստիճանի:
9	Նախագծի Աղյուսակ 5 -ի «Մոնիթորինգային ցուցանիշների համակարգ» - վերաբերյալ. • Ծրագրով խնդիր է դրվում հասնել նրան, որ ներառական կրթության համակարգում ընդգրկված լինեն ՀՀ բոլոր դպրոցները, սակայն Մոնիթորինգային ցուցանիշներում որպես ծրագրային նպատակ խոսվում է 110 դպրոցների մասին:	Դպրոցների՝ բոլոր երեխաներին ներառելու կարողությունը աստիճանական գործընթաց է և ծրագրային խնդիր է այդ կարողությունը զարգացնելը: 110 դպրոցների

		նպատակադրումը վերաբերվում է լիարժեք <<ներառական>> դպրոցներին:
	• Ծրագրի նկարագրային մասում՝ Բաժին 6 և 7-ում խոսվում է տեղեկատվական համակարգերը կրթական գործընթացներում ակտիվորեն ներդնելու մասին, սակայն մոնիթորիգային չափանիշներում սահմանվում է «1000 սովորողին 50 համակարգիչ (20 սովորողին 1 համակարգիչ)» ցուցանիշը, որը ի սկզբանե չի կարող ապահովել սովորողների համակարգչային գիտելիքների անհրաժեշտ մակարդակը:	*Ընդունված չէ:* <<Սովորող-համակարգիչ>> հարաբերակցության նպատակադրումը բխում է առկա միջոցներից և բավարար է ներկա փուլի ծրագրային պահանջների ապահովման համար:
	• Աղյուսակի «12» և «13» կետերում նշված ցուցանիշները՝ «Հիմնական դպրոցի քննությունները դրական գնահատականներով հանձնողների թիվը, %» և «Միջնակարգ դպրոցի քննությունները դրական գնահատականներով հանձնողների թիվը, %», որոնք նախատեսվում է հասցնել 99%-ի, չի նպաստում դպրոցում ուսումնական գործընթացի թափանցիկությանը, այլ ընդհակառակը՝ պարունակում է իր մեջ որոշակի ռիսկեր, կապված վարչական ռեսուրսների հաշվին պարտադիր սահմանված ցուցանիշին հասնելու ձգտում: Առաջարկում ենք այդ ցուցանիշները հանել:	*Ընդունված չէ:*
	• Աղյուսակի 16-րդ կետի «Կրթական ծառայությունների որակից սովորողների ծնողների և գործատուների բավարարվածության աստիճանը» ցուցանիշը տարանջատել՝ «սովորողների ծնողների բավարարվածության աստիճանը» և «գործատուների բավարարվածության աստիճանը» ցուցանիշների, քանի որ գործատուների տարբերակված կարծիքը կարևոր է սովորողների աշխատանքի տեղավորման առումով:	*Ընդունված է:*
12	Նախագծի Ծրագրի 12-րդ կետում նշված է, որ տարրական ու հիմնական դպրոցում սովորողների շրջանում գերակշռում են տղաները, իսկ ավագ դպրոցում՝ աղջիկները: Այս կետը ձևակերպել «գերակշռությունը աննշան է», քանի որ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տղաների և աղջիկների թվաքանակի տարբերությունը կրթության տարբեր մակարդակներում չի գերազանցում 5%-ը:	*Ընդունված է:* Կետը խմբագրված է:
13	Մանկավարժների վերապատրաստման դասընթացներում ներառել գենդերային հիմնախնդիրների հետ կապված կրթական բաղադրիչ:	ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգից բխող 2011-2015 թթ. միջոցառումները առանձին փաստաթղթով ներկայացվել են ՀՀ ԱՍՀՆ
14	Կրթական գործընթացում, համապատասխան ծրագրերում ներառել գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ դասընթացներ:	ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգից բխող 2011-2015 թթ. միջոցառումները առանձին փաստաթղթով ներկայացվել են ՀՀ ԱՍՀՆ

4. Գյուղատնտեսության նախարարություն		
1	նախագծի 37-րդ կետը լրացնել «Ուսանողների գործնական եւ պրակտիկ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջնային է նաեւ ուսումնաարտադրական տնտեսությունների եւ ՄՄՈՒՀ-ների տարածքներում փոքր արտադրամասերի ստեղծումը, Նման միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա բարձրացնել ՄՄՈՒՀ-ների վարկանիշը, ինչպես նաեւ պատրաստել արդի տեխնոլոգիաներին տիրապետող, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ եւ մրցունակ կադրեր» բառերով:	*Ընդունված չէ*, քանի որ առաջարկությունն ունի ծրագրային բնույթ և ըստ էության այն համապատասխանում է նախագծի 6.4. կետի 101 պարբերության 8-րդ ենթակետի դրույթներին:
2	նախագծի 59-րդ կետը լրացնել «Մասնավորապես անհրաժեշտ է անվճար ուսուցման տեղեր հատկացնել ոչ թե ժողովրդականություն ունեցող մասնագիտություններին այլ իրականացնել կադրային ճիշտ քաղաքականություն: Ելնելով երկրի տնտեսական զարգացման գերակա ուղղություններից եւ հաշվի առնելով ագրոպարենային համակարգի կարեւորագույն դերը անհրաժեշտ է առաջիկայում ավելացնել գյուղատնտեսական մասնագիտությունների գծով անվճար ուսուցմամբ հատկացվող տեղերի թիվը: Նման մոտեցումը հնարավորություն կտա մարզերում երիտասարդների համար ապահովել կրթական համակարգի մատչելիությունը եւ միտված է գյուղական աղքատության հաղթահարմանը» բառերով:	*Ընդունված չէ*, քանի որ առաջարկությունը չի վերաբերվում առկա իրավիճակի վերլուծությանը, իսկ գյուղատնտեսական մասնագիտությունների գծով անվճար ուսուցմամբ հատկացվող տեղերի հարցը պետք է քննարկվի մասնագիտական կրթության ֆինանսավորման ընդհանուր համատեքստում:
3	նախագծի 70-րդ կետը լրացնել նոր կետով հետեւյալ բովանդակությամբ. «միջին մասնագիտական ոլորտում ընդգրկված դասախոսների ցածր աշխատավարձը»:	*Ընդունված չէ*, քանի որ առաջարկությունը լրացուցիչ ուսումնասիրման և հիմնավորման կարիք ունի:
4	նախագծի 82-րդ կետի 2/-րդ ենթակետի դ. կետում «դպրոցների» եւ «դպրոցներ» բառերից հետո լրացնել համապատասխանաբար «միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների» եւ «մասնագիտական ուսումնական հաստատություններ» բառերով:	*Ընդունված չէ*, քանի որ ծրագրային ժամանակահատվածում բոլոր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները ինտերնետ կապով ապահովվելու նպատակադրումն իրատեսական չէ:
5. ՀՀ բնապահպանության նախարարություն		
1	«Կրթության զարգացման ազգային համատեքստը» բաժնի 72-րդ կետի 3-րդ ենթակետում «ապահովում» բառից հետո ավելացնել «՝ չանտեսելով էկոլոգիական հիմնախնդիրները» բառերը:	*Ընդունված չէ*, քանի որ **կայուն** տնտեսական աճի ապահովվումը արդեն իսկ ենթադրում է, որ էկոլոգիական հիմնախնդիրները պետք է հաշվի առնվեն:
2	«Կրթության զարգացման նպատակներն ու խնդիրները» բաժնի	*Ընդունված է:*

	80-րդ կետում «Բոլոնիայի հռչակագրի» բառերից հետո ավելացնել «և ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կողմից ընդունված «Կրթությունը հանուն կայուն զարգացման ռազմավարության» բառերը, այնուհետև՝ ըստ տեքստի:	
	6. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	
1	2.1 ենթագկիի 14 կետում <<Ըստ Հայաստանի պաշտոնական վիճակագրության>> բառերը հարկ է հանել, քանի որ տվյալները բերված են <<Հայստանում աշակերտների դպրոցից բացակայությամբ պայմանավորված դպրոցական ռեսուրսների կորուստների վերաբերյալ>> վերլուծական ուսումնասիրություններից, որի տվյալները խարսխված չեն դաշտային հետազոտական գործիքով հավաքագրված տվյալների վրա:	*Ընդունված է:*
2	Հարկ է օրենքի նախագծի <<Ծրագրի մոնիթորոիգային ցուցանիշների համակարգը>> աղյուսակի 5-ի <<Աղբյուր>> անվանումով վերջին սյունակից հանել <<ՀՀ ԱՎԾ>> բոլոր արտահայտությունները:	*Ընդունված է մասամբ:* Պաշտոնական աղբյուրը նշված է ԱՎԾ պաշտոնական հրապարակումներ:
	7. ՀՀ ֆինանսների նախարարություն	Դիտողություններ և առաջարկություններ չունեն:
	8.ՀՀ առողջապահության նախարարություն	Դիտողություններ և առաջարկություններ չունեն:
	9. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Դիտողություններ և առաջարկություններ չունեն:
	10.ՀՀ մշակույթի նախարարություն	Դիտողություններ և առաջարկություններ չունեն:
	11.ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի	Դիտողություններ և առաջարկություններ չունեն:
	12. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	Դիտողություններ և առաջարկություններ չունեն:
	13. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	Դիտողություններ և առաջարկություններ չունեն: